

**ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ՔՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ**

Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ

Անցած 16—17 տարվա ընթացքում հայերի ծագման և հնագույն պատմության մասին ավելի քան 100 տարի իշխող պատկերացումների հիմքերը սկսեցին սասանվել լեզվաբանական և հնագիտական նոր փաստերի ազդեցությամբ: Գիտական հանդեսներում բավական նյութեր տպագրվեցին ինչպես նոր փաստերի ներկայացմանն ու մեկնաբանմանը, այնպես էլ նախկին տեսակետի պաշտպանությանը նվիրված:

Այժմ ակնհայտ է, որ հայոց լեզվի և այն կրողների (հայերի) ծագման վերաբերյալ որոշակիորեն ղատորոշված երկու հակադիր տեսակետ գոյություն ունի. ըստ դրանցից մեկի, հայոց լեզուն և այն կրողները Հայկական լեռնաշխարհում բնիկ են, ըստ մյուսի՝ եկվոր: Առաջին տեսակետի հիմքը հնդեվրոպական նախահայրենիքը Հարավ-արևմտյան Ասիայում, ավելի որոշակի՝ Արևելյան, Փոքր Ասիայում և նրան կից տարածքում (ներառյալ Հայկական լեռնաշխարհը) տեղադրելու վերաբերյալ եղած լեզվական և հնագիտական փաստերն են. ըստ այդմ Ասիայի հնդեվրոպական լեզուները՝ խեթալուվիականը, հունարենը, հայերենը, փոյուգիերենը, հնդիրանյանը, թոխարերենը և այլն համարվում են հնդեվրոպական ամբողջության տրոհումից հետո նախահայրենիքում մնացած (տեղական հնարավոր որոշ տեղաշարժերով հանդերձ) լեզուներ: Մյուս տեսակետը, որ հանրահայտ է, հենված է հնդեվրոպական նախահայրենիքը Եվրոպայում տեղադրելու նախկին վարկածի վրա, ըստ որի Ասիայի հնդեվրոպական բոլոր լեզուները (և դրանք կրողները) տարբեր ժամանակ եկել են Եվրոպայից: Մասնավորապես հայոց լեզվի (և այն կրողների) մասին մշակվել է հետևյալ տեսակետ-կաղապարը. Հայկական լեռնաշխարհում և շրջակայքում հայոց լեզու և հայեր չեն եղել մինչև մ. թ. ա. 6-րդ դարը (ըստ այլ տարբերակների՝ մինչև մ. թ. ա. 5-րդ, 10-րդ կամ 12-րդ դարերը), այլ եղել են, այսպես կոչված, խուռի-ուրարտացիներ և ուրիշ ոչ հայկական ցեղեր: Հայերը եկել են, ձուլել (ուծացրել) այդ ցեղերին: Ըստ այս տեսակետի, մինչև մ. թ. ա. 6-րդ դարը Հայկական լեռնաշխարհում ձևավորված պետությունները հայկական չեն եղել (համառոտելով՝ առաջին տեսակետը պայմանականորեն մականվանում ենք բնիկության, երկրորդը՝ եկվորության):

Խոսքը հիմնականում վերաբերում է խեթական մ. թ. ա. 15—13-րդ դդ. արձանագրություններում Հայաստան կոչվող և արքադական արձանագրություններում սկսած մ. թ. ա. 9-րդ դարից Ուրարտու կոչվող երկիր-պետություններին. հայկական են եղել դրանք, թե՞ ոչ:

Եկվորության տեսակետի ջերմ կողմնակիցներից ականավոր արևելագետ, պրոֆ. Ի. Դյակոնովը իր «Հայ ժողովրդի նախապատմությունը» գրքից¹ հետո մի

¹ И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968.

շարք հողվածներ հրապարակեց ջանալով պաշտպանել քննադատվող տեսությունը²: Նույն տեսակետի կամ նրա այս կամ այն տարբերակի պաշտպանությամբ հրապարակվեցին նաև այլ հեղինակների՝ Ն. Հարությունյանի, Գ. Սարգսյանի, Գ. Տիրացյանի և այլոց հողվածները³: Մենք փորձել ենք պատասխանել դրանց⁴:

Ներկայումս հնդեվրոպական նախահայրենիքը Հարավ-արևմտյան Ասիայում տեղադրելու վերաբերյալ եղած փաստերի առատությունը մի շարք լեզվաբանների ու պատմաբանների մոտ մեծ դեպի նախկին պատկերացման վերանայում: Կարելի է նշել ակադ. Ս. Երեմյանին, որն իր վերջին երեք հողվածներում բերած ուշագրավ փաստերով մերժեց ոչ միայն հայերի, այլև փոյուզիացիների եկվորություն մասին եղած պատկերացումը⁵: Իրենց մի քանի հողվածներով եկվորության վարկածը հիմնավորապես մերժեցին նաև ականավոր պատմաբան-բանասեր, հանգուցյալ Ա. Մնացականյանը և շնորհալի խեթագետ Վ. Խաչատրյանը:

Այժմ, եթե եկվորության տեսակետի կողմնակիցները հետևողականորեն մերժում են խեթերեն Հայաստ և աքքադերեն Ուրարտու կոչված երկիր-պետությունների հայկական լինելը, ինչպես, օրինակ, Գ. Տիրացյանը⁶, ապա բնիկության տեսակետի որոշ պաշտպաններ էլ մերժում են մերթ Հայաստի, մերթ Ուրարտուի հայկական լինելը՝ անշուշտ ցուցաբերելով անհետևողականություն: Այնհայտ է, որ ավելի քան մեկ դար իշխող եկվորության տեսակետի հոգեբանական «ճշումից» լիովին ազատվելը շատ էլ դյուրին չէ, և բուն եկվորության տեսակետի անփաստ լինելուն համոզված հեղինակների մի մասը շարունակում է պաշտպանել մերթ «Հայաստ»-ի, մերթ «Ուրարտու»-ի ոչ հայկական լինելու մասին արմատացած պատկերացումը: Մասնավորապես, աքքադերեն Ուրարտու անվանված պետության մասին գրում են այսպես. ճիշտ է, հայերը բնիկ են և անհիշելի ժամանակներից բնակվում են Հայկական լեռնաշխարհում, բայց Ուրարտուն հայկական չէ, Ուրարտուի ժողովուրդը հայեր չեն: Եվ չեն նկատում այսպիսի բանաձևի հակասականությունը. եթե Հայկական լեռնաշխարհի բնակչությունը հնուց ի վեր հայկական էր, ապա ինչպե՞ս կարող էր այդ լեռնաշխարհի տարածքը գրադեցնող առնվազն 250 տարի գոյություն ունեցած երկիր-պետության բնակչությունը կամ նրա զգալի մասը հայկական չլինել:

Նախքան վերոհիշյալ հեղինակներից մի քանիսի հրապարակված կարծիքներին անդրադառնալը, հավանաբար, կարիք կա հակիրճ ներկայացնելու մեր կարծիքը հարցի վերաբերյալ⁷:

Հայաստ խեթերեն նշանակել է հայեր, Հայք (—աստ խեթական հոգնակերտ և տեղանիշ մասնիկ է): Ճիշտ չէ խեթական այդ տեղանվանաձևը, ինչպես և նրբանից կազմված հայասական, հայասերեն անվանումները հայերենում գործածելը, քանի որ այս լեզվում կան դրանց նույնանիշները՝ Հայք (Հայաստան), հայկական, հայերեն: Խեթական արձանագրություններում մ. թ. ա. 15—13-րդ

² «Պատմա-բանասիրական հանդես» (ՊԲՀ), 1981, № 1, 1983, № 4, «Вестник древней истории» (ВДИ), 1981, № 2, 1982, № 3, 4, Древний Восток», 1983, № 4:

³ Համապատասխանաբար՝ ՊԲՀ 69 № 3, 70 № 3, 85 № 1:

⁴ «Բանբեր Երևանի համալսարանի» (ԲԵՀ) 1979 № 2, «Երևանի համալս.» (ԵՀ), 82, № 2, 83 № 3:

⁵ «Коммунист», 81 № 9, 84 № 7, «Գիտություն և տեխնիկա», 85 № 4:

⁶ ՊԲՀ, 85 № 1:

⁷ Մանրաման տե՛ս բացի 4-րդ ժանոթագրության մեջ նշվածներից, նաև՝ ԲԵՀ 84 № 1, ԵՀ 79 № 1, «Лит. Армения», 81 № 4, «Коммунист», 80 № 40, «Սով. Հայաստան» (հանդես), 82 № 1, 11, 83 № 3, 12, 85 № 5, «Գրական թերթ», 71 № 33, 79 № 31, 81 № 32, 83 № 17, «Գարուն» 69 № 6, 79 № 10, 80 № 9:

դդ. հիշվող Հայքի տարածքը, ըստ տվյալների, համընկել է Մեծ Հայքի, համեմայն դեպս, զգալի մասին (մասամբ էլ Փոքր Հայքի արևելյան մասերը ներառած): Փաստերը վկայում են, որ խեթերեն Հայասա ձևին ժամանակագրորեն աքթադերենում հափրդած Ուրարտու-ն նույնպես Հայք է նշանակել, դա եղել է մինչև մ. թ. ա. 6-րդ դարի սկզբները գոյատևած հայկական պետությունը. այդ փաստերից են՝ Նինվեից փախած հայրասպան արքայազնների ապաստանելը՝ ըստ աքթադական աղբյուրների Ուրարտուում, ըստ եբրայականի՝ Արարատում, ըստ հայկականի՝ Հայֆում, Աքեմենյան եռալեզու արձանագրությունների ընձևած հավասարումը՝ Արմինա—Հայք=Ուրարտու (Ուրաշտու), արմինիյա—հայ=ուրարտայա (ուրաշտայա), Հալդ—հալդ=հայերի, այսինքն՝ ուրարտացիների աստված: Հայերենից փոխառյալ բառերը նորիսուհիներենում: Ուրարտու անվանումը որպես Արարատ-ի աքթադական տարրերակ. վերջինս, ինչպես և Արարտու, Ուրարատ ձևերը (Կումրան), գործածվել են եբրայերենում: Արարատ-ի նախնական ձևն է Այրայրատ-ը՝ կազմված բնիկ հայերեն (հնդեվրոպական) այբ բառի սաստկացուցիչ կրկնությունից և -ատ ածանցից, ունեցել է հետևյալ ընթացքը՝ Այրայրատ > Այրարատ > Արարատ, վերջինն անցնելով սեմական լեզուներին (աքթադերեն, եբրայերեն, արամեերեն) ստացել է այդ լեզուներում հայտնի ձևերը (նաև՝ Ուրարտու, Ուրաշտու): Բիայնան վանն է, Արարատի թագավորությունը Կանի թագավորությունն է: Հայկական այդ պետությունը կարողացավ իր իշխանության տակ միավորել հայկական լեզվացեղային միավորի (էթնոսի) սփռման գրեթե ամբողջ տարածքը, որ Մեծ Հայքն է:

Արարատի թագավորության արձանագրությունները և նրա հիշատակությունները աքթադական արձանագրություններում սկսում են երևալ մ. թ. ա. 9-րդ դարից, բայց այդ պետությունը ավելի վաղ է ասպարեզ եկել, գուցե մ. թ. ա. 11-րդ դարում:

Քանի որ Ուրարտու անվանաձևն աքթադերեն է, իսկ Արարատ-ը հայերեն անկախ այն բանից, թե գիտնականներն ինչ պատկերացումներ ունեն այդ պետության լեզվացեղային կազմի վերաբերյալ, հայերենում պետք է գործածել այս լեզվի բառը՝ Արարատ և համապատասխանաբար արարատյան և այլն:

Աքթադերենում գործածված Նաիրի անվանումը տարածք է նշանակել՝ տրրվել է Հայկական լեռնաշխարհին, երբեմն էլ նրա որևէ մասին:

Արարատի հայկական թագավորությունում նախ օգտագործել են սեպագիր աքթադերենը, ապա մի լեզու, որը մենք պայմանականորեն կոչում ենք նորխուրիերեն կամ բաուրեբեն (այդ լեզվի բառը բառից, որ նշանակում է խոսք, լեզու), մերժելով նախկինում այդ լեզվին տրված վաներեն, խալդեբեն, ուրարտեբեն անվանումները, քանի որ այդ երեք անուններն էլ կարող են միայն նշանակել հայերեն, մինչդեռ սեպագիր այդ լեզուն, գիտության այսօրվա տվյալներով, հայերենը չէ: Մինչև 5-րդ դար Հայաստանում գտնված արձանագրությունների մեջ հայերեն գրված որևէ հուշարձան չկա, ուստի «Հայասա»-ի, «Ուրարտու»-ի, «Նաիրի»-ի լեզվացեղային (էթնոկական) կազմը Հայքում գրված արձանագրությունների լեզվով որոշելը սխալ է (հիշել Լ. Օպենհայմի դրույթը՝ հինարևելյան երկրներում գտնված արձանագրությունների լեզուն հաճախ արձանագրությունները գրելու ժամանակ այդ վայրում խոսված լեզուն չի եղել):

Վ. Խաչատրյանը համոզիչ փաստերով հաստատում է, որ խեթերեն Հայասա-ն Հայք է նշանակել, բայց մերժում է Հայասայի նույն տարածքում նրան հաջորդած Ուրարտուի հայկական լինելը՝ և ի պաշտպանություն դրա բերում է

⁸ «Լրբեր հասարակական գիտությունների», (129), 1980, № 6, էջ 101—112:

Խորենացու Հայոց պատմության 1-ին գրքի այն մասը, որտեղ թվարկված են Հայաստանի թագավորները Շամիրամի մահից հետո: Այդտեղ մատնացույց է անում հետևյալ հատվածները. «Ահա այժմ ես դվարճանում եմ՝ ոչ փոքր ուրախություն զգալով, որ հասնում եմ այն տեղը, երբ մեր բնիկ նախնիի սերունդները թագավորության աստիճանի են հասնում»⁹ և «Այժմ ես կանցնեմ թվարկելու մեր մարդկանց, մանավանդ թե թագավորներին, մինչև Պարթևների տերության (հաստատվելը): Որովհետև մեր թագավորների մեջ ինձ այս մարդիկ են սիրելի, իբրև բնիկներ, արյունակիցներ և խոսկական հարադատներ»¹⁰: Քանի որ թվարկված թագավորները: տվյալ շարքի մի մասի գահակալության մոտավորապես որոշված ժամանակաշրջանը ինչ-որ տեղ համընկնում է Արարատյան թագավորության շրջանին, հեղինակը եզրակացնում է, որ Հայկից մինչև Անուշավան (ներառյալ) Հայաստանում եղել են բնիկ հայ տիրակալներ, Անուշավանից հետո Պարեսից սկսած իբր եղել են օտարազգի թագավորներ, մինչև Սկայորդի, որոնք իբր թե հենց ոչ հայկական «Ուրարտու»-ի թագավորներն են: Ապա՝ Պարուլյրով իբր նորից սկսվել է բնիկ հայկական թագավորների շարքը: Նման հատվածներ հեղինակը նշում է նաև մի քանի այլ պատմիչների երկերից:

Սրա մասին պետք է ասել հետևյալը: ա) Այս տեսակետը ակնհայտորեն ծագել է Խորենացու մատուցած նյութը ոչ հայկական Ուրարտուի տեսակետին հարմարեցնելու համար: Հեղինակը համոզվելով, որ հայերը Հայկական լեռնաշխարհում բնիկներ են, ներքուստ չի կարողանում համակերպվել դրանից բխող իրողությանը, որ Ուրարտու-ն սոսկ Հայաստանի անուններից մեկն է, և որ այդ պետությունը հայկական է եղել: բ) Այս մասին խոսած հետագա (Խորենացուց հետո) հայ պատմիչները թագավորների կամ տիրակալների հերթական թվարկումը անկասկած վերցրել են իրենց նախորդած Խորենացուց: Ուրեմն, այս հարցի շուրջը մտորելու համար բավական է Խորենացին, քանի որ նա է միակ սկզբնաղբյուրը: գ) Խորենացին Հայաստանի բոլոր թագավորներին, նաև Պարեսից մինչև Սկայորդի, թվարկում է «Մեր ազգի ճյուղավորության համեմատությունը երրայեցինների և քաղղեացիների ճյուղագրությունների հետ...»¹¹ վերնագրի տակ: Պարզ է, որ «մեր ազգի» (ազգիս մեյրոյ) ասելով Խորենացին հասկանում է իր ազգի ներկայացուցիչներին, այսինքն՝ հայերին: Եվ այդ տիրակալների շարքի սկզբում էլ դնում է Հայոց խորագիրը, փ տարբերությունն Երեւանցոց և Քաղղեացոց խորագրերի: դ) Խորենացին Պարուլյրին համարում է Սկայորդու որդի¹², ուրեմն՝ եթե Պարուլյրը առաջին հայազգի թագավորն է, այդ ինչպե՞ս է, որ նրա հայրը՝ Սկայորդին հայ չէ: Ապա՝ Խորենացին այնպես է թրվարկում տիրակալներին, որ նրանցից յուրաքանչյուրը նախորդի ժառանգն է մեզ ներկայանում: Եվ եթե դա, Խորենացու խոսքով ասած, մեր, այսինքն՝ հայ ազգի ճյուղավորությունն է՝ ապա ինչպե՞ս կարող է պատահել, որ շարքի առաջին տեղերում դրված՝ Արայան Արան (Արա 2-րդը) և Անուշավանը հայ են, իսկ նրանցից հետո եկող Պարետը և սրան հաջորդողները, այդ թվում՝ Արթակ, Սուր, Հայկակ, Նորայր, Պերճ, Զարմայր և այլն հայ չեն, այլ՝ օտարազգի, և Պարուլյրի հայրն էլ իբր այլազգի է: Իհարկե, տրամաբանություն չկա բողոքովին: ե) Ինչ վերաբերում է վերը բերված քաղղեացիներին, որոնցում Պարուլյրին պատմիչը «մեր բնիկ նախնիների» սերունդ է կոչում, արյունակից, ապա այստեղ ևս հասկանալի և գուցե մասամբ աշատու մեկնություն է կատարվում: Իրոք, եթե Խորենացուն Պարուլյրը և նրա սերունդը հատկապես սիրելի են սոսկ իբրև Հայկի սե-

⁹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1981, էջ 128, (գ. 1, ԻԱ):

¹⁰ Նույն տեղում, էջ 130, (գ. 1, ԻԲ):

¹¹ Նույն տեղում, էջ 126 (գ. 1, ԺԹ):

¹² Նույն տեղում, էջ 130 (գ. 1, ԻԱ):

րունդ, բնիկ և եթե նա զվարճանում է՝ ուրախություն զգալով, դրանց մասին գրելով որպես ծագումով հայերի, ապա ինչպե՞ս է, որ հենց ճիշտ նույն տեղում խորենացին խիստ հարձակում է գործում այն մարդկանց դեմ, ովքեր Բագրատունիներին ծագումով բնիկ հայկական տոհմ են համարում: Խորենացին բերում է վկայություն, որ Պարույրի որդի Հրաչյան Նաբուզդոնոսորի ձեռքից ազատել է հյւսա առաջնորդ Շամբաթ-Սմբատին և բերել Հայաստան, ապա շարունակում է. «Պատմագիրն ասում է, թե սրանից շերվեց Բագրատունյաց ցեղը, և այս ստույգ է», ու հետո գրում է՝ «Մի քանի անվատահելի մարդիկ ասում են ըստ իրենց ենթադրության, բայց ոչ ճշմարտությամբ, իբր Բագրատունիների թագադիր ցեղը ծագում է Հայկից: Ուստի ես ասում եմ. այսպիսի հիմար խոսքերի մի հավատա, որովհետև ոչ մի հիմք կամ ապացույց չկա այդ խոսքերում, որ ցույց տա նրանց ճշմարտությունը»¹³:

Այս խոսքերն ուղղված են Սահակ Բագրատունուն՝ խորենացու մեկեանասին: Պարզ է, հեղինակը Բագրատունիների համար պատիվ է համարում ոչ հայկական, այլ հրեական ծագումը և ոչ շատ պատվաբեր Հայկից ծագած լինելը: Արդ. ինչպե՞ս է, որ նույն հեղինակը կարող էր մի քանի տող առաջ հայոց տիրակալների համար ամենաբարձր պատիվը համարել Հայկից ծագած լինելը, և դրանից անմիջապես հետո նույնը համարել գրեթե անպատվություն: Մեր ուսումնասիրողները խուսանալով են, անցնում այս փաստի կողքով, չնկատելու տալիս: Մինչդեռ դա կամ հակասություն է խորենացու գրքում, որ նշանակում է, թե Պարույրի և նրա սերնդի մասին վերոհիշյալ ասվածները՝ «զվարճանում եմ», «հարազատներ» և այլն, հետագայի մոծում են (քանի որ Սահակ Բագրատունուն ուղղված խոսքն ավելի հավանական է, որ նախնական, խորենացունը լինի), կամ, եթե այդպես չէ, ապա պետք է ջանալ ճիշտ հասկանալ խորենացուն: Արդյո՞ք նրա այդ ուրախության խոսքերը չեն վերաբերում այն բանին, որ Պարույրը առաջինն է մի այլ երկրի (Մարաստանի) հզոր թագավորի կողմից ճանաչվել Հայքի թագավոր, իսկ նրանից առաջ Հայաստանում իշխողները եղել են տիրակալներ, նահապետներ, նաև թագավորներ, բայց գուցե չճանաչված այնպիսի հզոր մի թագավորի կողմից, ինչպիսին էր Մարաստանի ինքնակալ Վարբակեսը (Կիաքսարը): Գուցե խորենացու գրքի այդ հատվածն ունենա մի ուրիշ բացատրություն, բայց ամեն դեպքում պարզ է մի բան, որ խորենացին «Մեր ազգի ճյուղավորություն» խորագրի և «Հայոց» վերնագրի տակ թվարկել է իրոք մեր ազգի՝ հայերի և իրոք հայոց տիրակալներին: Ուստի խորենացին առավել հաստատում է, որ մ. թ. ա. 9—6-րդ դդ. Արարատյան երկրում իշխողները հայեր են եղել:

Սա այնքան ակնհայտ է, որ Ա. Մնացականյանը գրեց¹⁴, թե Հայոց վերնագրի տակ խորենացին հայերի է նկատի ունեցել, բայց դրանք իբր այդ ժամանակ Հայքում իշխող օտարների կողմից նշանակված դրածոներ են եղել և ոչ թե Հայաստանի տիրակալներ (կամ թագավորներ): Ապա՝ որ խորենացին իբր վկայել է ոչ հայկական «Ուրարտու»-ի մասին, բայց չի տարբերել «խուտի-ուրարտական» տիրապետությունը ասորեստանյանից¹⁵, որ իբր հայ դրածո Արա 2-րդից մինչև Պերճ եղել են Ասորեստանի կամակատարներ, իսկ դրանից հետո մինչև Սկայորդի «Ուրարտուի» դրածոներ: Վկայակոչվում են նաև Հովհաննես Դրասխանակերտցին, Սամվել Անեցին, Թովմա Արծրունին, Մ. Չամչյանը, Ղ. Ալիշանը, Ա. Գարագաշյանը, Ս. Պալասանյանը:

Այս մասին էլ հարկ է ասել հետևյալը. ա) «Մեր ազգի ճյուղավորության

¹³ Նույն տեղում, էջ 130—131 (գ. 1, ԻԲ):

¹⁴ Տե՛ս 124, 81 № 2, էջ 74—87:

¹⁵ Նույն տեղում, էջ 84:

համեմատությունը երբայեցոց և քաղղեացոց...» խորագրի տակ երեք ազգերի տիրակալների թվարկման և մանավանդ Հայոց վերնագրի տակ կատարված թվարկման միակ աղբյուրը, կրկնում ենք, Մովսես Խորենացին է, և սրա դեմ ոչ ոք չի առարկում, ուստի Դրասխանակերտցին, Անեցին և Արծրունին այդ թվարկումը վերցրել են Խորենացուց. կամ ճիշտ չեն հասկացել և կամ վերցնելուց հետո իրենք աղափարել են, իրենց մեկնությունները տվել: Նույնը վերաբերում է Չամչյանի, Ալիշանի, Գարագաշյանի և այլոց այն մեկնություններին, որոնք առնչված են Դրասխանակերտցու, Անեցու և Արծրունու ասածներին: Ամենը պետք է թողնել մի կողմ և քննել միայն այսօր առկա միակ սկզբնաղբյուրը՝ Խորենացու ասածը: Բ) Խորենացու գրքի համապատասխան հատվածներում ոչ հայկական «Ուրարտուի» մասին հեռավոր, կողմնակի կամ որևէ մի այլ տեսակ ակնարկ չկա: Գ) Պետք չէ մտացածին մեկնաբանել Խորենացու գրքի հետևյալ հատվածը (բերում ենք գրաբար, քանի որ հրապարակված աշխարհաբար թարգմանությունը մասամբ անճիշտ է). «Այլ անդէն իսկ ի կենդանութեան իւրում Շամիրամ զծնեալն ի Նուարդայ ի սիրելի կնոջէն Արայի, որ էր երկտասան ամաց մնացեալ ի մահուանն Արայի, վասն առաջին իւրոց խանդաղատանացն որ առ Արայն Գեղեցիկ՝ կոչէ զանուն նորա Արայ և կարգէ զնա ի վերակացութիւն աշխարհիս, մտերմութեամբ հաւատացեալ ի նա. գործէ և մեռանել ասեն ընդ Շամիրամայ ի պատերազմին»¹⁶: Ահա, կարծում ենք, հնարավոր ճիշտ թարգմանությունը (մեր կատարած). «Շամիրամը դեռ իր կենդանութեան օրոք Արայի որդուն (որը ծնվել էր Նվարդից՝ Արայի սիրելի կնոջից և Արայի մահվան ժամանակ տասներկու տարեկան էր)՝ Արա Գեղեցիկի նրկատմամբ իր տածած խանդաղատանքի պատճառով՝ նրա անունով կոչում է Արա և մտերմաբար վստահելով նրան՝ կարգում այս աշխարհի ղեկավար. և ասում են, որ նա Շամիրամի դեմ եղած պատերազմում մեռավ»: Այստեղ ասված «Կարգէ զնա ի վերակացութիւն աշխարհիս» կապակցությունից հանվում է վերոհիշյալ եզրակացությունը, թե Արա 2-րդը և նրանից հետո թվարկվածները օտարների՝ Ասորեստանի և «Ուրարտուի» նշանակած դրածոներ են եղել: Բայց Խորենացու գրածը պետք է հասկանալ այնպես, ինչպես կա. հաղթած Ասորեստանը (Շամիրամը) հայոց հզոր (սպանված) թագավորի ժառանգին ինչ-ինչ նկատառումներով Հայաստանում հաստատում է տիրակալ, որ սովորական երևույթ էր հին աշխարհում (առավել հզոր, հաղթած տիրակալը հաղթված երկրում թագավոր է կարգում նախորդ թագավորի ժառանգին): Այստեղ շնկատելու է տրվում Խորենացու ասածի շարունակությունը, որ Արա 2-րդը նույնպես սպանվել է Ասորեստանի դեմ կռվելով: Այսինքն՝ նա արդեն դարձել էր Ասորեստանից անկախ հայոց տիրակալ (թագավոր):

Ճիշտ չի մեկնաբանվում նաև Արա 2-րդի որդի Անուշավանի մասին ասվածը. «Այս Անուշավան բաւական ժամանակս արհամարհութիւն կրեալ ի Զամեսեայ՝ տուայտի ի դրանն աղբունի. իսկ օգնեալ ի բարեշամաց շահի զմասն ինչ աշխարհիս, հարկահանութեամբ խնամել, զկնի ապա և գրողորս»¹⁷: Սա կարող է նշանակել և նշանակում է միայն մի բան՝ բարեկամների օգնութեամբ Արա 2-րդի որդին դառնում է Հայաստանի մի մասի, ապա ամբողջի ղեկավար, բայց կախյալ վիճակում Ասորեստանից (Զամեսից): Դ) Աքքադական և նորխուռիական արձանագրությունների մեջ որևէ տեղ որևէ ակնարկ չկա այն մասին, որ իբր Ուրարտուում իշխել են ինչ-որ օտարներ, որոնք նշանակելիս են եղել տեղացի (հայ) դրածոներ: Եթե նման բան տեղի ունեցած լիներ, հարյուրավոր արձանագրություններից գոնե մեկի մեջ դրա մի ակնարկ կլիներ: Բայց չկա:

¹⁶ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 63 (1, Ի):

¹⁷ Նույն տեղում, էջ 64:

Ամենուրեք անցքերն այնպես են նկարագրվում, որ Արամը, Սարգուրը, Մենուան, Արգիշտին և մյուսները տեղացիներ են՝ ուրարտայա-ներ, այսինքն՝ արմինիյա-ներ՝ հայեր: Ե) Խորենացին Հայոց վերնագրի տակ թվարկելով 29 տիրակալներ, նրանց զուգահեռ դնելով Նբրայեցոց և Քաղղեացոց վերնագրերը և յուրաքանչյուրի տակ թվարկելով համապատասխան թագավորների, պարզ ասում է, որ այդ երեք շարքերը նույնաբժեք են, այն իմաստով, որ եթե առաջին շարքը երբայնցիների, Երկրորդը քաղղեացիների տիրակալներն են՝ իրենց ազգից, ապա Երրորդը հայերի (Հայքի) հայ տիրակալներն են: Եթե Հայոց վերնագրի տակ թվարկվածները Հայքում նստած օտարների դրածոներ են ևղել Հայաստանում, ապա Նբրայեցոց վերնագրի տակ հիշվածներն էլ՝ Հեսուն, Դավիթը և մյուսները պետք է դրածոներ լինեին Հրեաստանում, որ անհեթեթություն է: Եվ ոչ մի ակնարկ չկա Հայաստանում իշխած ինչ-որ «խուրի-ուրարտացիների» մասին: Չ) Խորենացին այլ աղբյուրի տվյալներով բերել է Հայոց տիրակալների անունները, որոնցից մի քանիսը նորաբույր են՝ 5-րդ դ. հիշեցնող (պահլավական), զուցե դրանք թարգմանված են կամ լրացված Խորենացու կողմից: Ժամանակագրությունն էլ անհստակ է և այլն: Սակայն ամեն դեպքում Խորենացու պատումի մեջ մի բան անկասկած է, այն, որ նշված տեղում հեղինակը խոսում է հայ տիրակալների (թագավորների) մասին:

Այսպիսով, Խորենացու վկայակոչումը իբր ոչ հայկական Ուրարտուի կամ նրա ոչ հայ թագավորների մասին եղած կարծիքը հաստատելու համար լիովին անհող է:

Գ. Տիրացյանը Ուրարտուի ոչ հայկական լինելու մասին իր կարծիքը¹⁸ համոզիչ դարձնելու համար դիմում է այլ միջոցների, այդ թվում գիտություն մեջ ընդունված և չընդունված (երկրորդի տակ նկատի ունենք խրատական ոճը, վիրավորելու միտումը): Նա հաշվի է առնում վերջին ժամանակներս եղած հրապարակումներն ի պաշտպանություն հայերի բնիկության և հայկական Ուրարտուի (Արարատի թագավորության), և, լիովին պաշտպանելով եկվորության տեսակետը, ջանում է նրան այսօրվա համար «ընդունելի» կամ հրապուրիչ տեսք տալ: Նրա հիմնադրույթը հետևյալն է՝ հայերի իսկական նախնիները ոչ թե հայախոս հնդեվրոպական հայերն են եղել, այլ ոչ հայախոս, ոչ հնդեվրոպական, իր բառով ասած «խուրի ուրարտացիները»: Իր հոդվածի վերնագրում անգամ նա այդ բանն է ասում՝ «Հայերի ոչ հնդեվրոպական նախնիները՝ խուրի ուրարտացիները և Ուրարտու—Հայաստան պրոբլեմը»: Հոդվածի առաջին նախադասության մեջ էլ կարդում ենք. «Կարելի է ապացուցված համարել, որ Հայկական լեռնաշխարհը վաղուց բնակեցնող խուրի ուրարտացիները հայերի նախնիներն են և կազմել են հայ ժողովրդի հիմքը» (էջ 194): Հարցին անտեղյակ կամ քիչ տեղյակ մարդը կարող է ճիշտ չհասկանալ այս ձևակերպման իրական իմաստը և առհասարակ ամբողջ հոդվածը: Իսկ հեղինակի միտքը այդ ձևակերպման մեջ և ամբողջ հոդվածում մեկն է՝ կային «խուրի ուրարտացիներ», որոնք հայեր չէին, այլ բոլորովին ուրիշ լեզվացեղային (էթնիկական) միավոր ու հնում նրանք էին գրադեցնում ամբողջ Հայկական լեռնաշխարհը, և Ուրարտուն, որ համընկնում էր Մեծ Հայքի տարածքին, հայկական չէր, այլ «խուրի ուրարտական», հայերը (այսինքն՝ հայախոսները) խուժեցին Ուրարտու, այդ «խուրի ուրարտացիներին» ուժացրին իրենց մեջ, և դրա պատճառով այդ ոչ հայ «խուրի ուրարտացիները» հայերի նախնիներն են:

Սա է Գ. Տիրացյանի գրածի այբն ու քեն, մնացածը գունազարդում է: Ինչպես դժվար չէ նկատել, դա նույն, եթե թույլ կտրվի ասել, «եկվորա-ուրար-

¹⁸ ՊՔՀ, 85 № 1, էջ 193—207 (այսուհետև էջերը նշում ենք ընդգրկում, քաղվածքները մոտ):

տական» տեսակետն է՝ զարդարված «խուրրի ուրարտացիներին» հայերի նախնիներ հայտարարող խայծով¹⁹։

Ակզբում հեղինակը բավական երկար (էջ 195—197) «ապացուցում է», որ աքքադական արձանագրություններում կա Ուրարտու անվանում. դրա համար մեջբերումներ, օրինակներ, վկայություններ են բերված։ Բայց ամբողջ աշխարհում կա՞ արդյոք մի մարդ, որ ասած լինի, թե աքքադական արձանագրություններում Ուրարտու անվանում չկա։ Այդպիսի անձ, որքան մեզ հայտնի է, գոյություն չունի։ Ով այս հարցով թեկուզ մի փոքր զբաղվել է և աչքի անցրել աքքադական համապատասխան արձանագրությունները, գիտի, որ Ուրարտու (Ուրաշտու) անվանումը բազմիցս է գործածված այդ արձանագրություններում։

Գրվել է ու ասվել այլ բան՝ որ աքքադական արձանագրությունների Ուրարտու-ն (Ուրաշտու-ն) նշանակել է Հայաստան, որ դա Հայաստանի անուններից մեկն է՝ համարժեք Արարատ, Արմենիա, Սոմխեթի անվանումներին։ Այս իրողությունը ցույց տալու համար տողերիս հեղինակն էլ է փաստեր ու փաստարկներ բերել. փոխանակ դրանց անդրադառնալու, հողվածագիրը «ապացուցում է» անվիճելին։

Ապա՝ նա պնդում է, թե իբր տողերիս հեղինակը գրել էր, որ նորխուռիերեն²⁰ լեզուն «սեփական գիրը շունեցող պետության կողմից օրպես պաշտոնական լեզու պարտադրվել է հայ բնակչությանը» (198)։ Մի քանի անգամ այդ պարտադրվել-ը գործածում է իբրև մեր բառը և հղում դեպի մեր մի հողվածք (ԲԾՀ, 79, 1)։ Դարձյալ՝ անհնար է չզարմանալ. մենք այդ հողվածում կամ այս հարցին նվիրված որևէ այլ գրության մեջ նման բան չենք գրել, պարտադրվել բառը երբևէ չենք գործածել, և որքան մեզ հայտնի է, որևէ այլ հեղինակ նույնպես չի գրել նման բան։ Ամենուրեք, նաև Գ. Տիրացյանի նշած հողվածում, գրված է, որ Արարատի (Ուրարտուի) հայոց պետության մեջ իբրև գրոց լեզու գործածվել է նախ սեպագիր աքքադերենը, ապա նորխուռիերենը, ինչպես որ դրանից հետո եղած հայոց պետություններում գործածվել են արամեերենը կամ հունարենը։ Հավանաբար, հեղինակի մտածելակերպից է զալիս հնում գրավոր լեզվի «պարտադրվելու» ըմբռնումը. ստիպված ենք ասելու, որ Արարատի թագավորության ժամանակաշրջանում, նաև Նրվանդունիների, Արտաշեսյանների ժամանակ արձանագրություններում գործածված լեզուներից որևէ մեկը, որևէ կերպ չի պարտադրվել Հայաստանի հայ բնակչությանը, քանի որ այդ բնակչությունը, թեև իբր ծագման օրից խոսում էր հայերեն, բայց անգրագետ էր, երկրում չկար համատարած կամ կես-համատարած գրագիտություն։ Նորխուռիերեն կաղապարային լեզուն, գուցե և աքքադերենն ու սեպագրերն ընդհանրապես իմացել է քրմական դասի մի ինչ-որ մասը։ Իսկ այն ժամանակներում անգրագետ ժողովրդին միայն գրավոր գործածված օտար լեզու, գիր պարտադրելն անհնար էր։ Քրմերի կամ թագավորական տների մղտքով չի էլ անցել նորխուռիերենը կամ աքքադերենը, արամեերենը և կամ Հայքում արձանագրությունների համար գործածված մի այլ օտար լեզու պարտադրել հայ ռամիկին։ Խոսքը նեղ կաստայական լեզվի մասին է. ընդ որում, կաստան ջանացել է, որ այդ լեզուն ու գիրը լիովին անմատչելի մնան ժողովրդին։

¹⁹ Ո՞րն է հեղինակը համարում ոչ հայկական «Ուրարտու»-ի և Հայաստանի ժամանակագրական սահմանը. նկատվում է, որ նա էլ ումանց նման այդ սահմանը համարում է մ. թ. ա. 590 թվականը, այսինքն՝ մինչ այդ գիծը կար «Ուրարտու», դրանից հետո՝ Հայաստան, և դա ավելի քան 300 հազար ք. կմ.-ի վրա։

²⁰ Գ. Տիրացյանի գործածած խուրրի (այստեղից նորխուռիերեն) ձևը հայերենին օտար է, և մենք հայերենին ավելի հարազատ ենք համարում խուռի (նորխուռիերեն) ձևը կամ, գուցե, հուռի (նորհուռիերեն). հայերեն հնագույն ձևն է քոռեցի։

Այդպես եղել է մինչև 4-րդ դարը, մինչև քրիստոնեությունը երկրի կրոն հայտարարելը:

Օտար լեզուն գրի միջոցով կարող է պարտադրվել գրագետ ժողովրդին, այդ ժողովրդի մանուկներին ու պատանիներին, որոնց մայրենի լեզվով շեն կրթում, և որևէ ձևով, իրոք, պարտադրում են սովորել օտար դպրոցում: Հնում, սովյալ դեպքում մ. թ. ա. 1-ին հազարամյակում և դրանից առաջ ցեղերի, ժողովուրդների լեզվական ձուլումը կատարվել է միայն բանավոր:

Մեծարգո հեղինակը, ըստ երևույթին, 19—20-րդ դարերի օրինաչափությունների ակնոցով է դիտում 2800—2600 տարիների առաջվա իրադարձությունը:

Ընդհանրապես, ոչ հայկական Ուրարտուի պատկերացումը մի հենակետ ունի միայն՝ արձանագրությունների լեզուն: Եթե Մեծ Հայքի տարածքում գրտնրված շիհնեին մ. թ. ա. 9-րդ դարի վերջին քառորդից մինչև մ. թ. ա. 6-րդ դարի սկիզբը փորագրված շուրջ 450 սեպագիր արձանագրությունները, ավելի դյուրին կըմբռնվեր, որ աքքադական աղբյուրներում հիշված Ուրարտու-ն Հայաստանն է: Երբ Հայաստանում գտնված սեպագրերը հայերեն կարգալու փորձերը (Մորդան, Սանտալճյան և ուրիշներ) ձախողվեցին և պարզվեց, որ այդ արձանագրությունները երկու լեզվով են գրված՝ մի փոքր մասը աքքադերեն, իսկ մեծ մասը մի այլ լեզվով, փութանակի եզրակացություն արվեց, թե իբր այդ մյուս լեզուն տեղի բնակչության խոսածն է, և քանի որ այդ ժամանակ հնդեվրոպական նախահայրենիքը աներկբայորեն տեղադրում էին Եվրոպայում, կազմվեց մի պարզունակ կաղապար, որը մենք անվանեցինք եկվորաուրարտական:

Գ. Տիրացյանը մի 15—20 տարի առաջ այս կաղապարը պաշտպանում էր նրա, եթե կարելի է ասել, դասական վիճակում²¹ (որը վերը ներկայացրինք): Այժմ նա նույն այդ կաղապարի մի նորոգված տարբերակն է պաշտպանում: Բլենիկության տեսակետի մասին նա գրում է, որ եթե Հայկական լեռնաշխարհը մտել է հնդեվրոպական նախահայրենիքի տարածքի մեջ, ապա՝ «նման մոտեցման դեպքում հայերի հնդեվրոպական նախնիները դեռևս հնագույն ժամանակներից ապրում էին Հայկական լեռնաշխարհում կամ նրա հարևան տարածքում» (206), և անմիջապես այդ «նման մոտեցման» վերաբերյալ ավելացնում է՝ «գիտական առաջին արձագանքները այդ տեսության մասին խիստ քննադատական են» (205): Պարզ է, հեղինակի սրտով չէ այդ տեսությունը, և նա ճիշտ չի ներկայացնում «արձագանքների» խնդիրը: Հնդեվրոպական նախահայրենիքի փոքրասիական տեսակետը պաշտպանվել է դեռևս 1890-ական թվականներից (Յ. Շմիդտ և ուրիշներ), իսկ այժմ շատ հետևորդներ ու պաշտպաններ ունի: Անկասկած է, որ «քննադատական արձագանքներ» գրելով հեղինակը նկատի ունի Ի. Մ. Դյակոնովի քննադատական հոդվածները, քանի որ իր պաշտպանած «ոչ հնդեվրոպական նախնիների» տեսակետը հենց Դյակոնովի առաջադրածն է (նրա վերը նշված աշխատություններում): Իսկ դրական արձագանքները հեղինակը «չի նկատում» կամ, թերևս, գիտական չի համարում:

Երկու խոսք Ի. Մ. Դյակոնովի առաջադրած և մեր հեղինակի «Թարմացրած» այդ տեսակետի մասին: Դրա համաձայն հայերը երկու տեսակ նախնիներ ունեն՝ ըստ լեզվի, որոնք հնդեվրոպացի են, հայալեզու (այսինքն՝ հայ) և ըստ մարդաբանության, որ այլազելու են (այսինքն՝ ոչ հայ)՝ «խուրրի ուրարտացիներ» և այլ ցեղեր. ըստ այդմ՝ հայերի նախնիներ են և՛ հայերը, և՛ ոչ հայերը: Ի. Դյակոնովը, Գ. Տիրացյանը ու մի քանի այլ հեղինակներ այս երկու տեսակ «նախնիների» խառնվելը (որ կարող է նշանակել միայն մի բան՝ ոչ հրեղ-

²¹ Տե՛ս, օրինակ, «Հայրենիքի ձայն», 1966, № 8:

եվրոպական «նախնինների» ուծացում հայերի կողմից) անվանում են «հայ ժողովրդի կազմավորում»:

Այս «կազմավորումը» առաջադրվեց այն ժամանակ, երբ իշխում էր Ն. Մառի և Գ. Ղափանցյանի տեսակետը լեզուների խառնվելու մասին, և այն ժամանակ հայ ժողովրդի կազմավորում ասելով հասկանում էին հնդեվրոպական հայոց լեզվի և ոչ հնդեվրոպական «տեղական» անվանված լեզուների խառնըվելը: Այժմ, երբ լեզվաբանական տարրական գրագիտության բարձրացման շրջանորհիվ մարդիկ գիտեն, որ Հայաստանում և նրա ամենալայն շրջակայքում երկու և ավելի լեզուների խառնուրդից երբևէ նոր լեզու, նոր ժողովուրդ չի առաջացել և չի առաջանում, «կազմավորմանը» նոր բովանդակություն են ուզում հաղորդել՝ երկու տեսակ նախնինների բովանդակությունը, որ նույնքան անհաշտ է փաստերի ու տրամաբանության հետ, որքան և նախկին «կազմավորումը»:

Հայ ժողովրդի կամ հայկական լեզվացեղային (էթնիկական) միավորի միակ հատկանիշը, առանց որի այդ միավորը հնում էլ, այժմ էլ գոյություն ունենալ չէր կարող և չի կարող, հայոց լեզուն է՝ հայամտած, հայախոս լինելը: Միայն հայոց լեզվի գոյությունը կա հայ լեզվացեղային միավոր, հայ ժողովուրդ, առանց այդ լեզվի, հայերի մյուս բոլոր հատկանիշների առկայությամբ, չկա հայկական էթնոս, չկա հայ ժողովուրդ: Եթե ինչ-որ տեղ լինի լիովին հայամտած և հայախոս հանրություն, բայց մարդաբանորեն ոչ արմենոիդ (ոչ հայկական), այնուամենայնիվ դա կլինի հայկական հանրություն, իսկ եթե լինի ոչ հայամտած, ոչ հայախոս հանրություն, բայց մարդաբանորեն արմենոիդ, դա հայկական հանրություն չէ: Օրինակ, թուրքերը մարդաբանորեն արմենոիդ են, բայց թուրքամտած և թուրքախոս են, ուստի հայ չեն: Արևելյան վրացիները նույնպես մարդաբանական այն կարգի (արմենոիդ) մեջ են, ինչ և հայերը, բայց հայ չեն, քանի որ հայամտած, հայախոս չեն, և այսպես շարունակ...

Սա նշանակում է, որ հայ հանրության, հայ ժողովրդի նախնինները եղել են կրողներն այն լեզվի, որը հազարամյակների միջով անցնելով, փոփոխվելով, բայց միշտ մնալով հայոց լեզու այսօր հայ ժողովրդի գոյության փաստն է: Իսկ Դյակոնովը, Տիրացյանը ասում են՝ եթե հայերը իրենց մեջ ուծացրել են, հայախոս են դարձրել ոչ հայկական «խուրրի ուրարտացիներին», ապա սրանք հայերի նախնիններն են: Բայց այդ դեպքում հայերի նախնինները պետք է համարվեն նաև խեթերը, հրեաները, ասորիները և այլն, քանի որ տարբեր ժամանակ շատ խեթեր, հրեաներ, ասորիներ և ուրիշներ էլ են հայացել: Կամ՝ այդ մտածելակերպով թուրքերի նախնինները հայերն ու հույներն են, որոնք հարյուր հազարներով թուրքացան և մասնակցեցին թուրքերի մարդաբանական բնույթի կերտմանը:

Ահա, թե ինչ խառնաշփոթ է ստեղծում այդ տեսությունը: Ի դեպ, կազմավորում բառն իր մեջ զգալիպես պարունակում է եկվորության տեսակետը. մեքսիկական ժողովուրդը, փոքր, կազմավորվեց, քանի որ իսպանացիները այնտեղ եկվոր էին, նրանք ձուլեցին տեղի հնդկացիներին, և կազմավորվեց իսպանախոս մեքսիկական ժողովուրդը: Կամ թուրքերը եկան Փոքր Ասիա, ուծացրին շատ հայերի, հույների և կազմավորվեց թուրք ժողովուրդը և այլն: Ի. Դյակոնովը և նրան հետևելով Գ. Տիրացյանը այս նույնն ուզում են վերագրել հայ ժողովրդին: Բայց չկա, գոյություն չունի լեզվական, հնագիտական և որևէ կարգի փաստ կամ փաստարկ, որ թճկուղ ինչ-որ ձևով ակնարկեր հայոց լեզվի (հայերի) գալը այս լեռնաշխարհ: Չկա, որքան էլ դա հաճելի չէ Գ. Տիրացյանին և Ի. Դյակոնովին: Այդ չկալի մասին բազմիցս ենք գրել և խնդրել մեր ընդդիմախոսներին, որ եթե իրենք գիտեն կամ տանն տրևէ նման փաստ, թող հրապար-

րակեն: Մեր դեմ գրված հոգվածների պակաս չկա, ու այժմ էլ գրվում են ու հրատարակվում, սակայն հեղինակներից որևէ մեկը այդ խնդրված փաստը չի բերում, և անհնար է բերել, քանի որ չկա: Բնականաբար, Գ. Տիրացյանն էլ նրման փաստ չի բերել, շունի, բայց և անընդհատ համառորեն կրկնում է հայերի՝ Հայկական լեռնաշխարհ «մուտք գործելու», նրանց այդ լեռնաշխարհում «երևալու» (206), հայերի այդ լեռնաշխարհ «ներթափանցելու» (205) մասին: Նա, իր խոսքով ասած, «հայ-արմենական ցեղերի» եկվորություն մասին գրում է նաև այսպես. «Հայկական լեռնաշխարհի արևմուտքից, տարբեր ժամանակներում, տարբեր ուղիներով այդ ցեղերը շարժվել են դեպի արևելք և հաստատվել երկրի տարբեր մասերում» (205): Հեղինակի մտածելակերպի, պատկերացումների մեջ երևի շատ ամուր է նստած, գուցե և անջնջելի, հայերին արևմուտքից բերելու պատկերացումը. այն իշխում է հեղինակի բոլոր դատողությունների վրա: Ընդ որում, նա որևէ կերպ չի էլ փորձում հերքել այս լեռնաշխարհում հայոց լեզվի ու հայերի բնիկ լինելու մասին տարբեր հեղինակների, նաև տողերիս գրողի բերած բազմաթիվ փաստերից գեթ մեկը:

Գ. Տիրացյանը բավական երկար է գրել Արարատի թագավորության ոչ աքքադական արձանագրությունների լեզվի մասին: Նա ջանում է ապացուցել, որ՝ ա) այդ լեզուն խոսվել է «Ուրարտուի» (այսինքն Արարատի թագավորության) ամբողջ տարածքում, իսկ այդ տարածքը նա նույնն է համարում ինչ և Մեծ Հայքինը, բ) այդ լեզուն մինչև մ. թ. ա. 6-րդ դարի սկիզբը եղել է խոսակցական, գ) Ուրարտուի (այսինքն՝ Արարատի թագավորության) բնակչությունը եղել է գրագետ և սեպագիր արձանագրությունները գրվել են այդ բնակչության լեզվով, որ նա կարգա, ընթերցանությամբ զբաղվի:

Որ Արարատի թագավորության և Մեծ Հայքի տարածքը մ. թ. ա. 8-րդ դարից սկսած գրեթե նույնական էր, սա անատոլիկի է: Բայց որ այդ ժամանակ ու դրանից առաջ և հետո այդ ավելի քան 300 հազար ք. կմ տարածքում խոսել են «ուրարտերեն» (այսինքն՝ նորիտուրերեն), որևէ փաստով չի ապացուցվում: Հեղինակի միակ փաստարկն այս կետում այն է, որ Մեծ Հայքի տարածքի տարբեր տեղերում գտնվել են նորիտուրիերեն արձանագրություններ: Բայց Մեծ Հայքի տարածքում գտնվել են նաև արամեերեն, հունարեն, արաբերեն շատ արձանագրություններ գտնվել են նաև արամեերեն, հունարեն, արաբերեն շատ արձանագրություններ. միթե՞ դա նշանակում է, որ այդ տարածքի ամբողջ բնակչությունը նաև այդ լեզուներով է խոսել: Կամ շումերերեն ու աքքադերեն շատ արձանագրություններ գտնվել են Սիրիայում և Փոքր Ասիայում, բայց հայտնի է, որ այդ երկրների բնակչությունը երբևէ շումերախոս չի եղել, իսկ Փոքր Ասիայի բնակչությունը՝ երբևէ աքքադախոս չի եղել: Կամ այժմ հինարևելագետների հիմնական մասն այն կարծիքին է, որ Միտանին Միջագետքի հյուսիսում եղել է արիական (հնդկափրանյան) պետություն, թագավորները՝ հնդկափրանյաններ (հնդեվրոպացի), բայց այդ երկիր-պետության արձանագրությունները խուրիերեն են, երբեմն աքքադերեն, խեթերեն, և հնդկափրաներեն մեկ արձանագրություն անգամ չկա: Այսպիսի օրինակներ շատ կարելի է բերել, որոնք բոլորը հաստատում են հինարևելագետ Լ. Օպենհայմի քանիցս արած պնդումը, որը վերևում հիշատակեցինք²²: Եվ այսպես, Արարատի թագավորության արձանագրությունների մեջ գործածված երկու լեզուները՝ աքքադերենն ու նորիտուրիերենը բնավ չեն վկայում, թե այդ թագավորության բնակչությունը ինչ լեզվով է խոսել: Մենք ապացույցներ ենք բերել, որ այդ բնակչությունը հիմնականում հայախոս է եղել: Այդ ապացույցներից մեկը, ինչպես ասվեց, նորիտուրիերեն արձանագրությունների մեջ թափանցած բազմա-

²² Л. Оппенхейм, Древняя Месопотамия, М., 1980, էջ 1980.

թիվ բնիկ հայերեն (հնդեվրոպական) բառերն են ու անունները²³ (այդպես էլ Միտանի պետության բնակչության հիմնական մասի և թագավորների հնդկա-իրանցի լինելը ցույց տրվեց խուռիերեն և աքքադերեն արձանագրությունների մեջ թափանցած հնդկաիրանյան բառերի և անունների փաստով): Բերում ենք նորխուռիերենի մեջ անցած բնիկ հայերեն բառ-արմատներից մի քանիսը. հայերեն՝ սուր «թուր, զենք»—նորխուռիերեն՝ šuri «զենք», հ. աւել, աւելի—նիս. abili (նույն իմաստներով), հ. ազ (անիմ) «հագցնել, անց կացնել»—նիս. agu «անց կացնել», հ. ալլ «տուրիշ»—նիս. ule «ուրիշ», հ. առ «վերցրու»—նիս. aru «տալ, հրամցնել», հ. բա(ն) «խոսք, առարկա»—նիս. ba(uše) «խոսք, առարկա», հ. դր(ել) «դնելը»—նիս. teru «դնել, հաստատել», հ. դի «աստվածություն, ուժ»—նիս. di «ուժ», հ. մն(ալ) «մնալ, լինել»—նիս. men «լինել», հ. պնդ(ել) «փորել»—նիս. pili «փորվածք», հ. տոզ(ր), տա(լ) «տալ»—նիս. tu «հանձնել», հ. ուդի «ճանապարհ»—նիս. uli «ճանապարհել», հ. ծառ «ծառ»—նիս. cari «ծառ», հ. ուա(ել) «ուտել»—նիս. atu «ուտել» և այլն:

Բայց մեծարգո հեղինակը նաև այլ փաստարկ է բերում: Նա գրում է. «Հունարենը և արամեերենը ունեցել են միջազգային աննախադեպ տարածում, որ չի կարելի ասել ուրարտական արձանագրությունների լեզվի մասին» (199): Այս ամբողջությունում է. «Մենք ոչ մի օրինակ չունենք, որ այդ լեզվով օգտվել են ուրիշ ժողովուրդներ կամ պետություններ» (ն. տ.): Սա էլ համոզիչ փաստարկ է: Նախ միջազգային անվանումը, այն էլ աննախադեպ-ի հետ հազիվ թե սազական լինի արամեերենին ու հունարենին (օրինակ, Զինաստանում, Ճապոնիայում դրանք իբրև այդ երկրների գրավոր լեզու չեն գործածվել) և առհասարակ միջազգային լեզու երբևէ չի եղել և չկա, ու այդպիսին ունենալու ուղղությամբ գործադրած բոլոր ջանքերն էլ ապարդյուն են անցել: Այդ երկու լեզուները պարզապես ավելի շատ են տարածված եղել Հարավ-արևմտյան Ասիայում: Զմոռանանք նաև, որ խոսքը զուտ իբրև գրավոր լեզու, այդ լեզվով շխտող երկրներում գործածվելու մասին է: Այս արամեերենից և հունարենից բացի, կան նաև հինարևելյան այլ լեզուներ էլ, որոնցով արձանագրություններ են գրվել այդ լեզուներով շխտող ժողովուրդների մեջ. դրանցից են, ինչպես, ասվել է, շումերերենը, աքքադերենը, նաև էլամերենը, որ երկար ժամանակ եղել է պարսիկների արձանագրությունների, գրագրության, նաև պետական լեզուն: Պարսիկները իրենց համար այդ օտար լեզվով գրել են և՛ նախքան սեպագիր պարսկերենի ասպարեզ գալը, և՛ դրանից հետո: Իսկ խուռիերը հողածագրի կողմից լրիվ վստահված գիտնականի՝ Ի. Մ. Դյակոնովի կողմից բնորոշվել են իբրև «Հին Առաջավոր Ասիայի մշակութային տեսակետից շորորդ մեծ ժողովուրդը»²⁴: Գրավոր խուռիերենն էլ գործածվել է նաև ոչ խուռիախոս ժողովուրդների մեջ (վերն ակնարկեցինք Միտանիի մասին), իսկ նորխուռիերենը նույն Ի. Մ. Դյակոնովի բնորոշմամբ «սերտ ազգակից է եղել» խուռիերենին, «այդ մերձակցությունը շատ ավել է, քան ենթադրվում էր»²⁵:

Մեր հեղինակն էլ է հավաստում այդ «ազգակցական մերձավորությունը» (197, 207): Արդ, խուռիերեն արձանագրությունները գրվել են մ. թ. ա. 2200 թ. սկսած մինչև 2-րդ հազարամյակի առաջին կեսը, իսկ նորխուռիերենը՝ մ. թ. ա. 9-րդ դարից սկսած, որ, կարծում ենք, նշանակում է, թե նորխուռիերենը խուռիերենի նաև ժամանակագրորեն նոր որակն է (գուցե այնպես, ինչպես, լուվիե-

²³ Այդպիսի բառերի մի ցանկ մենք դրել ենք Ի. Դյակոնովի մի հողածի առթիվ մեր գրած պատասխանում, որ դեռ հրապարակված չէ, հրապարակված է ավելի փոքր ցանկ (ծՂ, 83 № 3, էջ 16, նաև ԲԾՂ 79, 2, էջ 90, «Սով. գրակ», 85, 7, էջ 115, «Սով. Հայաստան» (ամսագ.), 85, 5, էջ 36 և այլն):

²⁴ ԲԾԻ, 70, № 4, էջ 76:

²⁵ Նույն տեղում:

րենը խեթերենի համեմատ է): Ամեն դեպքում առկա է մի լեզվի երկու տարբերակ, լեզու, որ բավական տարածված է եղել, համեմալն դեպս ոչ պակաս, քան էլամերենը: Այսպիսով, նորխուռիերենի, այսինքն՝ խուռիերենի մ. թ. ա. 1-ին հազարամյակի գրավոր տարբերակի՝ միայն «Ուրարտուում» (Արարատի հայոց թագավորության մեջ) գործածված լինելու մասին հեղինակի բերած փաստարկը նույնպես հիմք չունի:

Հեղինակը գրում է նաև, որ կավի տախտակների վրա դրոշմված նորխուռիերեն նամակ-արձանագրությունների կենցաղային բովանդակությունն իբր վկայում է, թե այդ լեզուն Մեծ Հայքի ամբողջ տարածքում խոսակցական է եղել (198): Զարմանալի է. արդյո՞ք հեղինակին հայտնի չեն շումերերենի, իբրև կենդանի լեզու, մահանալուց հետո, շուրջ 2000 տարվա ընթացքում այլ ժողովուրդների (ոչ շումերախոս) մեջ այդ շումերերենով գրված կենցաղային և այլ բնույթի բազմաթիվ գրությունները կամ պարսկերենի կողմից էլամերեն գրված կենցաղային գրությունները և կամ նման ուրիշ օրինակներ:

Հեղինակը գրում է, որ իբր Ուրարտուում (Արարատում) սեպագրերի լեզուն, իր խոսքով ասած, «սպասարկել է» «բավական ստվար զանգվածների» (199): Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ այդ «Ուրարտուում» խմբային ընթերցանության ժամեր են կազմակերպվել և ընթերցվել, ասենք, Վանում մի սալաքարի վրա իշար հետևից երկու անգամ գրված այս արձանագրությունը՝ «նալիի աստծու մեծությունը Սեւուում՝ Բշպուրիիի որդին, հզոր թագավորը, մեծ թագավորը, Բիսինա երկրի թագավորը, Տուշպա երկրի տիրակալը»: Վերջ: Արարատի պետության արձանագրությունները լի են հենց այս կարգի խնթափառաբանական կաղապարներով՝ մեկը մյուսի նման կամ մեկը մյուսի պատճենը: Ահա ձեզ, ըստ մեր հեղինակի, «Ուրարտուի» ժողովրդի հոգևոր սընունդը:

Մի՞թե պարզ չէ, որ մեծարգո հեղինակը նկարում է գոյություն չունեցած, մտացածին մի պատկեր: Այսօր անգամ, համատարած գրագիտության ժամանակաշրջանում, հայերեն: իմացողներից միայն հաղվագլուտ մարդիկ, հատուկ կրթություն ստացած մասնագետներն են կարողանում կարդալ հայերեն վիճագիր արձանագրությունները, որոնց հապավումները, ծածկագրերը հանելուկներ են թվում: Այդպիսիք են նաև պարսկերեն, արաբերեն, սլավոներեն և այլ լեզուներով գրված հին արձանագրությունները: Միջնադարում էլ հայերեն գրված արձանագրությունները կարդացել են միայն հատուկ գրագիտություն սովորած անձինք, իսկ հազարավոր լոռեցի Սաքոները չէին կարող կարդալ, օրինակ, Հաղպատի կամ Սանահինի վանքերին եղած արձանագրությունները, ոչ էլ նախարական Պետիները կարող էին կարդալ Տաթևի վանքի արձանագրությունները: Այդ ինչպե՞ս եղավ, որ հայերեն արձանագրությունների համեմատ շատ ավելի բարդ նշանագրություն ունեցող սեպագիր արձանագրությունները «խուրրի ուրարտացիների» «ստվար զանգվածներին» «սպասարկում» էին իբրև ընթերցանության և հոգևոր սնունդի նյութ:

Իրողությունն այն է, որ ոչ մի «խուրրի ուրարտացիներ» չեն եղել (որևէ տեղ վկայված չեն), այլ եղել են խուռիներ, որոնց բնակության տարածույթը (արեալը) բավական ցրված է եղել, բայց հիմնականում Մեծ Հայքի տարածքից դեպի հարավ-արևելք, հարավ՝ ներառյալ Միջագետքի հյուսիսը, Պաղեստին, Սիրիա, իսկ Մեծ Հայքի տարածքում հաստատված Արարատի թագավորությունում բնակվել են հայեր, որոնց աքքաղացիները անվանել են ուրարտայա (ուրարտացի): այս երկրի սեպագիր արձանագրությունների լեզուն և զիրը լիովին անմատչելի են եղել բնակչությանը, դրանք սարսափազդու կուռքերի դեր են կատարել:

Ինչ վերաբերում է նորխուռիերենի խոսակցական լինելուն, ապա պարզ

է, որ ինչպես ամեն լեզու (ոչ արհեստականորեն ստեղծված), այն էլ եղել է խոսակցական: Բայց նրա գործածութեան տարածույթը (արեալը) եղել է Մեծ Հայքից դեպի հարավ կամ հարավ-արևելք և շատ դարեր հարևան է եղել հայերենին: Մեծ Հայքը, ինչպես այլ առիթով փորձել ենք ցույց տալ, եղել է հայերենի գործածութեան տարածույթը, և Մեծ Հայքի միավորիչ միակ գործոնը եղել է լեզվական (աշխարհագրական, կլիմայական, տնտեսական և այլ գործոններ չկան). նրա սահմանները նույնական են հայերենը կրող ցեղերի տարածման սահմաններին (դրանք էլ Արարատի թագավորութեան սահմաններն են եղել): Իհարկե, բացառված չէ, որ նույն տարածքում, գերիշխող լեզվից բացի, խոսված լինեն նաև այլ լեզուներ: Ամեն դեպքում, եթե նորխուռիները, բացի իր հիմնական տարածույթից, խոսված էլ լինի Մեծ Հայքի հարավում, ինչ-որ տեղ, ապա մ. թ. ա. 8-րդ դարից այն այլևս խոսակցական չէր: Սրանց վերաբերյալ մեր բերած փաստերին ու փաստարկներին Գ. Տիրացյանը չի պատասխանում, այլ ջանում է նոր փաստարկներ գտնել իր «խուրրի ուրարտական» «սովար զանգվածների» լեզվական «սպասարկման» պատկերը անսպուման հավանական դարձնելու համար: Նա գրում է, որ իբր Մեծ Հայքի տարածքում նորխուռիներն էր բարբառներ են եղել, այն էլ՝ առնվազն երեք բարբառ՝ Վանի, Մուսասիրի, Արարատյան դաշտի (198), և հղում է դեպի Գ. Ղափանցյանի ու Գ. Մելիքիշվիլու գրքերը: Կարողում ենք: Առաջինը հղված էջում գրել է. «Լեզվի տեսակետից կմատնանշելինք, որ գրավոր դոկումենտների լեզուն կարող էր որոշ ցեղի կամ խավի լեզու լինել, կրելով սրբազան-պաշտոնական բնույթ: Կելիշենի ուրարտական տեքստը, օրինակ, որոշ բարբառայնություն է տալիս. այդպես Xaldi աստծու անունը հնչվել է Aldi, առանց սկզբի «X» (կամ հ) հնչյունի»²⁶: Այսքանը միայն: Ավելացնենք, որ նույն Քելյաշենի երկլեզու արձանագրության մեջ առկա են և՛ հալդի, և՛ Ալդի ձևերը: Եթե արձանագրության մեջ արտահայտված է ինչ-որ տեղական բարբառի Ալդի արտասանությունը, ապա ի՞նչ գործ ունի դրա կողքին հալդի ձևը: Եվ մի՞թե այս աննշան փաստից կարելի է բարբառների գոյության մասին եզրակացություն հանել, երբ մենք հաստատ չգիտենք էլ, թե այսօր հալդի ընթերցվող նշանագրերը իրոք այդպե՞ս պետք է կարդալ, թե՞ Հալդի: Հ-ն շունչ է և եթե իրոք Հալդի է հնչել ու կարդացվել ապա չէ՞ որ սեպագիր փորագրողը, եթե նա նշանագրությունը շատ էլ լավ չի իմացել, կարող էր ու շունչը գրավոր մերթ արտահայտել, մերթ շարտահայտել:

Գ. Մելիքիշվիլին նախ հակառակ Գ. Տիրացյանի պնդման ոչ թե «ուրարտերենի» երեք բարբառների, այլ երկու խոսվածքների (говоры) մասին է գրում²⁷, նրանց գոյության մասին նշելով՝ հավանաբար («повидимому», «по всей вероятности»): Նա Haldi-Aldi տարբերությունը ավելացնում է անցողական բայի անկատար հոգնակի 3-րդ դեմքի՝ երկու-երեք արձանագրության մեջ հանդիպող -ni-ali վերջավորությամբ կազմված ձևերը, ինչպես և մի քանի ուրիշ մանր-մունր տարբերակներ, որոնց հիման վրա ենթադրություն է անում Մուսասիրի կամ արևելյան խոսվածքի գոյության մասին: Այժմ միջոց շունենք մանրամասն ցույց տալու, որ լեզվական մեկ-երկու այդ տարբերակները շատ ավելի համոզիչ բացատրվում են այն բանով, որ սովյալ արձանագրությունների փորագրողները վատ են իմացել սեպագիր նշանների արժեքները և նորխուռիներին կաղապարաչին լեզուն (քանի որ այդ փորագրողները հայեր պետք է եղած լինեն): Ինչ վերաբերում է ենթադրյալ խոսվածքի՝ հեղինակի (Գ. Տիրացյանի) կողմից արված արևելյան հորջորջմանը, ապա դեռ հարց է, թե Արարատ-

²⁶ Գ. Ղափանցյան, Ուրարտի պատմություն, 1940, էջ 96:

²⁷ Г. Меликшвили, Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 32:

տի թագավորության կրոնական կենտրոն Մուսասիրը կամ Արդինին Մեծ Հայքից դուրս հարավ-արևելյան տարածքում է եղել (ինչպես Մելիքիշվիլին և մի քանի ուրիշներ են կարծում), թե՛ Մուսա-ասիրը Մուշն է, հայոց դիցարանի կենտրոնը, և արդյո՞ք նրա մյուս անունը՝ Արդինի հայոց աստված (ար-դի-նի) չի նշանակում, այսինքն՝ Հայկ|Հալդ²⁸:

Ապա հեղինակը հարց է տալիս, թե ինչու պիտի հայ թագավորները հրաժարվեին անհասկանալի աքքադերենից (ասուրերենից) և որդեգրեին նույնպես անհասկանալի նորխուրեերենը: Մեր կարծիքով, պատճառներից մեկը եղել է Արարատի թագավորների՝ Ասորեստանի հետ թշնամանալը և խուռինների հետ դաշնակցելը, դաշինք, որի արմատները հասնում են հեթանոսական պետության դեմ հայերի և խուռինների համատեղ պայքարի ժամանակաշրջանին: Հնարավոր են նաև ուրիշ պատճառներ:

Հոգվածագիրը իր նպատակին հասնելու համար դիմել է նաև փաստերը, մեղմ ասած, անճիշտ ներկայացնելու եղանակին: Նա Բեհիսթունի արձանագրության մեջ հիշված հայ Արաքսյին նվիրված պարսկերեն հատվածը, որտեղ ասված է Araka nāma arminija Halditahja pura («Արաքս անունով հայը՝ Հալդիստայի որդին») ներկայացնում է այնպես, որ իբր եղել է Հալդիստա անունով խուրրի-ուրարտացի մարդ և ուժացման հետևանքով նրա որդի Արաքան (Արախան) արդեն հայ էր դարձել (200)²⁹: Մինչդեռ գրվածի բովանդակությունը շատ պարզ է՝ Հալդի (Հալդիստա) աստծու որդի Արաքա անունով հայը: Ասորեստանցիներն իրենց համարում էին Աշուր աստծու որդիներ, հրեաները՝ Ծնովայի որդիներ: Այստեղ էլ հայը ներկայացված է Հալդի (Հայկ) աստծու որդի: Մեր հեղինակը հասկանալի պատճառով իր հոգվածի ընթերցողից թաքցնում է Բեհիսթունի արձանագրության նույն հատվածի աքքադական տարբերակը, որտեղ կա՝ Arahu šūumšu úraššaja «Արախա անունով ուրարտացին»: Ուրեմն հին պարսկերեն Արաքսն հայ է (arminija), աքքադերեն նա ուրարտացի է úraššaja), երևու դեպքում էլ Հալդի աստծու որդի: Այստեղից միայն մի եզրակացություն կարելի է հանել. հին պարսիկները հային արմինիյա են ասել, աքքադացիները՝ ուրաշտայա կամ ուրարտայա, այսինքն, որ արմինիյա-ն և ուրարտայա-ն տարբեր լեզուներով նույն հայկական էթնոսի անուններն են եղել, իսկ Հալդին եղել է հայերի, այսինքն՝ ուրարտացիների աստվածը: Եվ ինչո՞ւ է մեր մեծարգո հեղինակը թաքցնում ոչ միայն այս, այլև այն, որ Աքեմենյան եռալեզու բոլոր արձանագրություններում անխտիր Հայաստանը հին պարսկերեն կոչվում է Արմինա, աքքադերեն՝ Ուրարտու (Ուրաշտու):

Մեր հարգելի ընդդիմախոսը մի տեղ էլ իր ոչ հայկական «Ուրարտուի» տեսությունն է հարմարեցնում խորենացուն՝ գրելով, որ «Արարադի երկիրը, ուր ըստ Մովսես խորենացու ժամանակավորապես հանգրվանում է Հայկը Բաբելոնից հեռանալուց հետո» գտնվել է այժմյան Իրաքյան Քրդստանի լեռներում (197), Արարադի (այժմ Զուղդի դաղ) լեռան մոտ: Մինչդեռ Արարատի կամ Արարադի երկիր ասելով խորենացին ակնհայտորեն հասկացել է Մեծ Հայքի ամբողջ հարավը Վանա լճի հետ, գուցե և՛ ամբողջ Մեծ Հայքը: Բայց սա դեռ ոչինչ: Հեղինակն իր այդ ասածից քիսեցնում է. «Հավանաբար նախնական Ուրարտուն ձևավորվել է այս շրջանում, Մուսասիրի հռչակավոր կենտրոնից տշ հեռու և

²⁸ Արդինի տեղագրումը և ստուգարանությունը Մ. Կատվայանի առաջարկածն են: Ի դեպ, 5-րդ դարի հայ հեղինակների երկերում նույնպես հատուկ անունները և այլ բառերի տարբերություններ կան, որոնք բնավ բարբառների արտաստությունն չեն:

²⁹ Բեհիսթունի արձանագրության համաձայն Հալդիի որդի հայ Արաքան բնակվելիս է եղել Բաբելոնում, որտեղ, ինչպես հայտնի է, տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներ ուժացվում, դառնում էին քաղղեացի, մինչդեռ ըստ Գ. Տիրացյանի Բաբելոնում «խուրրի ուրարտացիները», չգիտես ինչու, հայ էին դառնում:

ապա տարածվել հյուսիսային ուղղութեամբ» (197); Ակնարկը թափանցիկ է. ըստ Գ. Տիրացյանի Հայկը և նրա տոհմը ոչ թե հայեր են եղել, այլ՝ ոչ հայ «ուրարտացիներ» և իբր նրանք հիմնել են ոչ հայկական «Ուրարտու»: Այդպիսով, ըստ հեղինակի, Հայկն էլ հայ չէ: Մեր հեղինակը, ինչպես ասում են, ոչինչ չի թողնում հորենացուց: Նա նաև ուրիշ շատ անփաստ ու անապացույց հայտարարութիւններ է անում իր հողվածում, ինչպես, օրինակ, Հայասան հռչակում է խեթերի երկիր (205—206), Խալդայ-խալիբներին՝ վրացական ռազմատենչ ցեղ (երբ խալիբների լեզվից ոչ մի բառ ու մասնիկ չի պահպանված), ալարոդ անվանումը ներկայացնում է իբրև ուրարտ-ուլարդ-ալարդ-ալարոդ դարմանահրաշ փոխանցումների արդյունք (200) (որ լեզվաբանական որևէ կարգի քննութիւն չի բռնում), ինչ-որ հայ-փոյուզիական ցեղերի ու նրանց վերաբնակեցման մասին է գրում (205) (երբ նման ցեղեր որևէ տեղ վկայված չեն, քանի որ չեն եղել, և հայերը փոյուզիացիներից նույնքան տարբեր են եղել, որքան և՛ հույներից կամ իրանյաններից), հնդեվրոպացի փոյուզիական ցեղերին մեծ դեր է հատկացնում ոչ հնդեվրոպացի վրացիների «կազմավորման» գործում (205), Բևիսթունի արձանագրութիւնը սխալմամբ համարում է մ. թ. ա. 521-ի (երբ նրա ընդգրկած ժամանակաշրջանը մ. թ. ա. 522—519 թվականներն են), և այսպես շարունակ:

Կրկնում ենք հին և հասարակ ճշմարտութիւններ. առանց փաստերի, առանց վկայութիւնների և առանց դրանց հարգելու, արժանահավատ պատմութիւն չի կարող լինել: Իսկ եղած վկայութիւնների և փաստերի միտումնավոր կամ ոչ միտումնավոր այլափոխումը ամեն գիտութիւն վեր է ածում ոչ գիտութիւն: Եվ պատմութիւնը չեն գրում մտքում նախապես անսասան պահելով որևէ կանխադրույթ կամ կաղապար (սովյալ դեպքում եկվորաուրարտականը), այլ՝ հավաքում են փաստեր ու վկայութիւններ և անաշտ եզրակացութիւններ անում:

Р. А. ИШХАНЫН—Вопрос о древнейших государствах и населении Армянского нагорья.—Сложилась различные мнения о стране-государстве, называемом Урарту в аккадских надписях и Арарат в древнееврейских источниках. Главные из них следующие два. Первое: армянский язык и его насители в 6—7-ом или в 12-ом вв. до н. э. проникли на Армянское нагорье, где обитали так называемые хуррито-урартские племена и было их государство—Урарту. Согласно другому мнению, армянский язык и его носители являются автохтонами Армянского нагорья, однако Араратское царство (Урарту) не было армянским государством. В статье делается попытка опровергнуть вышеупомянутые представления, привлекается множество фактов, свидетельствующих о том, что язык найденных на территории Армянского нагорья клинообразных надписей не был здесь разговорным и употреблялся только в письме. Основным же разговорным языком населения был армянский, который являлся автохтонным в этом регионе. Одним из подтверждений этого является наличие в новохурритском (урартском) языке клинообразных надписей большого количества армянских (индоевропейских) слов, небольшой список которых приведен в статье. Согласно приведенным фактам Урарту-Арарат был армянским государством.